

մը տալ: Ժողովրդական զրոյցին զանազան տարբերակներու վրայ ծանրանալ աւելորդ կը նկատեմ, այս մասին կարդալու է յատկապէս Dr. Bleichsteinerի գրքոյիը, ուր համառօտ ակնարկութիւններու նկատմամբ: Այսպէս իրանեան են Ռաշիձին, Յուսիք եւ Բատրի, որոնք Ռոստոմի զրոյցէն առնուած են. մեռելին կոչ արտասուքներէն կազմուած առուն ալ կը յիշեցընէ հին պարսկական սանդարամետի գետը, որ մեղաւորներու եւ ապաշխարողներու արտասուքներով կաղմուած է եղեր:

Պատերազմի տեսագծով իբր վերջին օրինակ կը յիշեմ հոս միայն գերմանական Բալտը, որ պակչով մեռնող նշանաւոր աստուածներու կարգէն է: Ըստ Էտտայի [Uhländ VI. 22] Բալտը գերմանական ամենաբարի աստուածն է, տեսքով գեղցիկ եւ լուսապայծառ, որ նաեւ արդարութեան, մաքրութեան եւ անմեղութեան աստուած կը նկատուի: Մահցուան մասին երկու տարբերակներ կան. միոյն համաձայն Բալտը երազ կը տեսնէ, որ իր կեանքն վտանգի մէջ է. ասոր վրայ Գրիգ իր մայրը աշխարհիս բոլոր տարրները կ'երգուընցնէ, որ Բալտըին կեանքին չդըպչին: Ամէնքն երգում կ'ընեն, բացի սոսնցարեր տունկէն: Երբ Լոկի այս կ'իմանայ, կ'երթայ անկից ճիւղ մը կը կարէ եւ կու տայ Հոսորին, որ անով Բալտը կը սպաննէ: Աստուածները շատ կը տրտմին եղածին վրայ եւ Բալտըին չերմոդեղայրը սանդարամետ չել դիցուհոյն կը դըրկնի, որ Բալտը ազատէ: Բայց դիցուհոյն դիակը կ'այրեն աստուածները, հոն սրտի ցաւէն կը մեռնի նաեւ հանա իր կինը: Աւելի սկզբնական կ'երեւայ իր տեսագծերովը միւս տարբերակը, որուն համաձայն Հոսոր Շուետի թագաւորին որդին էր, որ Կորվեդիսը թագաւորին նաև աղքէն կը սիրուէր: Բալտը ալ տեսած էր երրեմն նաև եւ սիրով անոր հետ կապուած: Հոսոր այս իմանալով՝ պատերազմի կ'ելէ Բալտըի դէմ, որուն առաջին անգամ կը յազթէ, բայց երկրորդ անգամուն անկից չարաշար պարտուելով՝ ճարահատ անոր ընկերացող երեք կոյսերուն օգնութեան կը գիմէ եւ անոնց միջոցաւ Բալտը կը սպաննէ: Բայց Բալտը յանձին իր եղբօր յարութիւն առնով՝ Հոսոր կը սպաննէ:

ԴՐԱՑ. Հ. Ա. ՄԱՅԻՍԻԱՆ

## ՄԻՀԻ ՀԱՅ ՀԱՅՈՅ ՄԻՀ

(Շարունակութիւն:)

### 3.

Մենք տեսանք, որ Արտաւազդի առասպեկն ու հաւատալիքն ըստ էութեան Միթրայի առասպեկն ու հաւատալիքն էր: Արտաւազդը նման էր Միթրային, բայց նոյն ինքը Միթրան չէր: Հայաստանն ունէր իւր իսկական Միթրան: Հայր Արամազդի որդի Միհրն էր այն:

Արդեօք Հայոց բուն Միհրի մասին կա՞ր այն հաւատալիքն ինչ որ կար պարսից մէջ Միթրայի մասին:

Արա պատասխանը, եւ գրական պատասխանը, տակիս է մեր ժողովրդական վէտը:

Հայ արդի ժողովրդական վէպի ուսումնասիրութիւնը մինչեւ այժմ ի միջի այլոց առաջադրել եւ ապացուցել է երեք գլխաւոր թեղիս, որոնք հաստատուն կուռան են մեր ձեռքում՝ այս նիւթին ուսումնասիրելու միջոցին:

Սրանցից առաջինն այն կուռաւունն է, թէ մեր արդի ժողովրդական վէպը, եթէ սրա պատմական յիշաւակները մի կողմ դնենք, Հայոց հին առասպեկների կրկնութիւնն են ըստ էութեան: Դեռ եւս 1899 թուականին Մանուկ Սրեղեանը «Հայ ժողովրդական հաւատքի» մէջ ապացուցել է, որ «Սամայ ծոերի» գլխաւոր հերոսներից մէկը — Սանասարը — «կայծակի հերոս» է ու «վիշապամարտ»<sup>1</sup>: Մօտ մի տասնամետ տարի: յետոյ նա աւելի ընդարձակելով այս միտքը՝ գրել է.

«Նոր վէպի մէջ Եղած դիւցապնական առասպեկները՝ համեմատելով մեր հին առասպեկներին՝ գտնում ենք, որ հին առասպեկները դրեթէ ամբողջապէս մտել են նոր վէպի մէջ, այն էլ նոյն գասաւորութեամբ, որ ունին այդ առասպեկները մեր հին վիշապանքի մէջ... որոնց բոլորի կենդրոնն է վիշապների գէմ կոռուելլ»:

«Մեր հին առասպեկների ու նոր վէպի մէջ Եղած առասպեկների նոյնութիւնն այն տասիհանի է, որ կարելի էր կարծել, թէ վէպը միեւնոյն հին վիշապանքն է»:

\* Dr. Manuk Abeghian, "Der armenische Volks-glaube", Leipzig 1899, էլ 86:

«Նոր վէպի մէջ հին վիպասանքից դուրս է ձգուած բոլոր պատմականը՝ պատմելով միայն գիւցազնական առասպելները՝ Սահասար, Դաւիթ ու Մհեր անունների տակ» :

Հայոց հին առասպելների մէջ ամպրոպի ու կայծակի Աստուած եւ վիշապամարտ էին Տիգրանը, Վահագն, Արտաշէսն ու միւսները : Ճիշտ սրանց նման կայծակնաղիք ու վիշապաքաղ են Սամասարը, Դաւիթն ու Մհերը : Այս երեքի միջից մեզ համար կարեւոր է յատկապէս Մհերի՝ ամպրոպի Աստուած ու վիշապամարտ լինելը :

Երկրորդ կարեւոր յայտնագործութիւնը, որ համարեա միաժամանակ արել են Ստեփան Կանայեանցն ու Մանուկ Արեգեանն, այն է, որ արդի ժողովրդական վէպի մէջ մի հերոս, որ սկզբնապէս մէկ անձն էր, յետագայում դարձել է երկու :

«Սկզբում — ասել է Կանայեանցը 1907 թուականին — վէպը ունեցել է միայն մի Մհեր . . . բայց յետոյ երկնեղը մէջ . . . վէպի փոփոխակների մէծ մասն ունին երկու Մհեր . Մհեր — Մէծ, Առիւծաձեւ Մհեր եւ Մհեր — Մհերիկ, Պատիկ Մհեր<sup>2</sup>» :

Մօտաւորապէս նոյնն է ասում Արեգեանը 1908 թուականին՝ գրելով. «Առիւծաձեւ Մհեր . — այս Մհերն իսկապէս կրկնութիւն է Պատիկ Մհերի<sup>3</sup>» :

Այսպիսով մեր նախկին իմացածի վրայ, թէ Սասմայ ծոերն, ուրեմն եւ մասնաւորապէս Մէծ Մհերն ու Պատիկ Մհերն ամպրոպային աստուածներ են եւ վիշապամարտ, այժմ աւելանում է մի նոր թեղիս, թէ Առիւծաձեւ Մհերն ու Մհերիկը միեւնոյն անձն են : Սրանից հետեւում է, որ թէ՝ այն, ինչ որ պատմվում է առաջնի մասին ու թէ՝ այն, որ ասվում է երկրորդի մասին, վերաբերում են մէկ հատիկ Մհերի :

Ո՞վ է այս Մհերը :

Սրա պատասխանը կազմում է մեր արդի ժողովրդական վէպի ուսումնասիրութեան երրորդ կարեւոր նուածումը :

Այս կէտում Արեգեանը մնացել է տարակուսած :

«Մհերի անձի մէջ, — ասում է, — միացած են երկու Աշոտի (Դաւիթի Բագրա-

տունու Եղբայր Աշոտի) ու Դաւիթի Բագրատունու որդի Աշոտի գլխին եկածը : Բայց աղդած է անշուշտ եւ Սասնոյ վերջին յայտնի իշխանի — Շահնշահի պատմութիւնը յետագայ դարերում : Պատմական դէպէրի յիշողութիւնը պարզ երեւում է . բայց թէ ինչպէս ոչ թէ Աշոտ կամ Շահնշահ անունն է պահուած, այլ Մհեր, այդ մենք բացատրել չենք կարողանում : Հարկաւ գրահամար աղդած է Սասնոյ պատմութեան որեւէ մեզ անձանօթ նշանաւոր անձ ու դէպէր<sup>1</sup>» :

Այս տարակոյսը փարատել է Ստ. Կանայեանցը՝ հրապարակ հանելով իւր նշանաւոր թեղիսը թէ :

«Մհերը Միհր — արեգակն է<sup>2</sup>» :

Հին հայոց առասպելների ամպրոպային աստուածների — Տիգրանի, Վահագնի, Արտաշէսի ու այլոց տեղն արդի ժողովրդական վէպը դրել է ուրիշ անուններ . սրանցից մէկն է հաւեւ Մհեր-Միհրը : Վերջնիս մուտքը հայ ժողովրդական առասպելների մէջ՝ անշուշտ պատահականութիւն չէ, այլ հետեւանք այն խորասոգոր աղդեցութեան, որ միհրապաշտութիւնն ունեցել է հայ կեանքում :

Մհերը Միհրն է : Այս զուգադրութիւնը չի հակասում այն թեղիսին, թէ Սամայ ծոերն, ուրեմն եւ Մհերն ամպրոպային Աստուած են : Զի հակասում, որովհետեւ Միթրա-Միհրը ոչ այլ ինչ է, բայց եթէ հաւգոյն ամպրոպային աստծու մի համեմատաբար նոր ու զարգացրած փոփոխակ : Անունը փոփուել է, բայց էութիւնը նոյնն է մնացել, եւ էութիւնը լոյսի կոփւն է խաւարի դէմ, կայծակի ու կրակի աստծու մարտը վիշապների դէմ, բարի ոգու ոգու ըստը չարաղեւի դէմ :

Առիւծաձեւ Մհերի ու Պատիկ Մհերի մասին պատմածները մի ամբողջութիւն են : Եթէ սրանց վերաբերեալ հասուածները խմբենք, այն ժամանակ ակներեւ կը դառնայ Մհերի զրոյցի ու Միթրայի առասպելի նոյնութիւնը :

Մհերը Վահագնի, Արտաւազդի ու Միթրայի նման կովում է վիշապների ու գեւերի դէմ : Նա յաղթում է այն առիւծին, որ յայտ-

<sup>1</sup> Արեգեան, «Հայ ժող. վէպը», 180—181:

<sup>2</sup> Կանայեանց, «Զովանց տան պատմականը», 45:

<sup>3</sup> Արեգեան, «Հայ ժող. վէպը», 170:

1 Արեգեան, «Հայ ժող. վէպը», 88:

Կանայեանց, «Զովանց տան պատմականը», 42:

նուել էր ճամբաների վրայ, գնացող-եկո-  
ղին ուստում էր եւ թանգութիւն էր ձգել  
Սամնում<sup>1</sup>: Առասպելի մէջ վիշապի փոխա-  
րէն առիւծի հանդէս գալը չի փոխում հար-  
ցի էութիւնը, որովհետեւ ինչպէս հայոց,  
այնպէս եւ ուրիշ ժողովուրդների զրոյցների  
մէջ վիշապներին ու դեւերին երբեմն փոխա-  
րինում են գաղանները: Օրինակ, գերմա-  
նացւոց ու հայոց մէջ իրրեւ չարութեան  
մարմնացում հանդէս է գալիս զայլը<sup>2</sup>: Ինչ-  
պէս վերջերս դեղեցիկ մեկնից Հր. Անա-  
ռեանը, հին հայոց Առնակը, որի նոյնանիշն  
են Գրողը կամ Հոգէառը, չնազալ է նշանա-  
կում<sup>3</sup>, Վրաց առասպելների մէջ գեւերի  
կողքին յիշվում են նաեւ կինձերը<sup>4</sup>: Մհերի՝  
առիւծի դէմ կոռուլու գէպքը մի ուրիշ փո-  
փոխակում պատմուած է Սահասարի մասին,  
եւ այստեղ առիւծի փոխարէն հանդէս է գա-  
լիս վիշապը, որն առանց մարդապոհի թուլ-  
քի տալիս ջուր վերցնել<sup>5</sup>: Կասկած չկայ, որ  
զաղանամարտութիւնը վիշապաքաղութեան  
մի այլ տարբերակն է լոկ: Վերջապէս ժո-  
ղովրդական վէպն ուղղակի ցուցմունքներ ել  
ունի այն մասին, թէ Մհերը կուռմ էր ոչ  
միայն զաղանների, այլ եւ գեւերի դէմ,  
որոնցից մէկն էր Կուպ գեւը<sup>6</sup>:

Մհերը կոչվում է Առիւծածեւ Մհեր:  
Այս մականունը բացատրվում է իրբեւ առիւ-  
ծին պատառող, ձեւող Մհեր: Կարելի է կար-  
ծել, որ այս մեկնութիւնը ժողովրդական  
ստուգաբանութեան արդասիք է, եւ թերեւ  
չէնց այս ստուգաբանութիւնն է պատճառ  
եղել, որ զրոյցի մէջ վիշտի տեղը բռնել  
է առիւծը: Ժողովրդական ստուգաբանու-  
թեան վրայ հիմնուած զրոյցների գոյու-  
թիւնը հանրայախնի իրողութիւնն է: Մհեր  
հեղինակներց բաւական է յիշել Խորենա-  
ցուն ու Յովհ. Մամիկոնեանին: Արդի ժո-  
ղովրդական բանահիւսութեան մէջ որա մի  
հետաքրքրական օրինակն է «սանամօր յար-  
դի» կամ «սանամօր զարմանին» զրոյցն, ըստ

<sup>1</sup> Գարեգին, սրկ., «Ասուլոց ճռելու», 21<sup>1</sup>.  
<sup>2</sup> Abeghian, 114, Աբեղյան, «Հայ ժող.» առաջ-  
 պելակըլըն», 362–363.  
 Ա. հանի, «Հին հայ-

3 "Արմատական բառարան", 520. Ալեքս., "Հին հայություն", 327—328.  
4 А. С. Хахалов, "Очерки по истории грузинской сло-

5 А. С. Хаканов, "Очерки по истории Франции", I, Москва, 1895, № 30 и 33<sup>1</sup>

<sup>5</sup> Կանյացեանց, <sup>6</sup> Սամասյ ծռեր կը ու-  
108—109: <sup>7</sup> Ուժեանց առաջ մէպը», 170:

<sup>8</sup> Արեգակնայի, "Հայոց ժողովը", 170:

որի Ծիր կաթինը կամ Յարդգողի ճանապարհն առաջացել է այն յարդից կամ դարձանից, որ սանամայրը դողացել է սանահօրից եւ փախչելիս թափթափել։ (Հմմտ. Սահմակ վ. Ամառունի, «Հայոց բառ ու բան», Վաղարշապատ 1912, էջ 162 — «գարմանադողի ճանապարհ», Աճառեան, «Գաւառական Բառարան», 953 — «սանամօր քաջ» , Abeghian, 49—50 — “Die Milchstraße”): Հին հայոց զրոյցի համաձայն «Յարդգողի հետը» կամ ճանապարհը կազմուել է այն յարդից, որ Վահազնը դողացել է Ասորեստանցիների նախնի Բարչամից եւ փախչելիս շաղ տուել երկնքում («Անանիայի Շիրակունոյ Մնացորդք բանից», Հրատ. Ք. Պատկանեան, Ս. Պետերբուրգ 1877, էջ 48)։ Արեգեանն իրաւամբ այս զրոյցի վարիանտ է համարում Սրուանձեանի «Գրոց-Բրոցում» պահուած այն սեւանդութիւնը, թէ Յարդգողը նշան է, որ ժամանակով ուրիշ արարածոց Աստուած իւր մշակները դրկեր, մեր երկրի Աստուծոյ կալին յարդերը դողցեր... յարդը թափեր երկնից երեսն ու մնացեր» (Abeghian, 49—50, Արեգեան, «Հայոցը» (Ապուասպելները», 246)։

Անանիա Շիրակացու փոփոխակի համաձայն Յարդղովի ճանապարհը կազմուել է Բարշամից գոլացած յարդից, իսկ «Գրոց-բրոցի» Վարդիանտի ասելով՝ Բարշամի գոլացած դարմանդից: Երկու դեպքում էլ Յարդղովի ճանապարհի հետ կապուած է Բարչամի անունը: Այս անունը, որ բարդ անուն է, կազմուած է Բար ու Շամ բառերից: Սրբանցից առաջինը Բէլ, Բաալ կամ Բահաղ անունն է, որ նշանակում է «տէր» (ԹՄԻՒ, «Иследования», 23, Արեգեան, «Հայ ժող. սուսպիները», 257): Օ Հնչիւնի՝ և Հնչիւնի փոխուելն այնքան էլ հաղուադէպ եւ-եւոյթ չէ. Զ. Գելցերն իբրև օրինակ մատանիչում է, թէ Babiru = Babilu, Nabitabira = Niđintavbil («Դիցարանութիւն Հայոց», «Բազմավէպ», 1897, էջ 355): Իրանից մենք Կ'աւելացնենք երեք ծանօթ առուն Յուստոց ու Հիւրշմանից: Բայտ Յուստոց «Namenbuch», 213) Միկրաս =Միկրաս = Միկրաս = Միւլադ, իսկ ըստ Հիւրշմանի՝ Բակտրիայի Բահլ կամ Բահլ անունը ծագել պահլաւերէն Բախր = Բահր ձեւից եւ Պար-հեւ անունն էլ նոյնն է, ինչ որ Պահլաւ՝ ան-

շուշտ անցման հետեւեալ օղակներով . Պարթեւ - Պարթաւ - Պարհաւ - Պահրաւ - Պահլաւ («Արմ. Շր.» 31, 63—65) :

Բար-Շամ անուան հնագոյն ձեւերն են շով՝ Բաալ-Շամին ու Բաալ-Շամէն եւ սով՝ Բաալ-Սամիմ ու Բաալ-Սամին (Գեղցեր, «Դիցաբանութիւն Հայոց», Բաղմալէպ, 1897, էջ 355, Ալիշան, «Հին հաւատք», 312—313) : Խորենացին (Բ, Ժդ, 128) ու Ազաթանդեղոսը (ՃԹ, § 784, էջ 408) պահել են Բար-Շամին ձեւն, իսկ յունարէն Ազաթանդեղոսն ունի Բար-Սամինէ (Hübschmann, «Արմ. Շր.», 291—292) : Անուան սեռական հոլով թէ Ազաթանդեղոսն ու թէ Խորենացին դնում են Բար-Շամինայ («Դիցն Բար-Շամինայ», «Քբար-Շամինայ զպատկերն»), որը սով կլինի Բար-Սամինայ :

Արդ եթէ մենք Յարդղողի ճանապարհի զրոյցները յիշելով հարցնենք, թէ ի՞նչ դարման է թափուած երկնքում, եւ պատախանը տանք սով հնչուող անունով, կը ստանանք Բաալ-Սամինայ յարդ կամ դարման : Դուրս ձգելով Բաալ=տէր մակդիրը՝ կ'ունենանք

Սամինայ յարդ կամ դարման :

Մեր կարծիքով ահա հենց այս Սամինայ յարդն է, որ փոխուելով Սամինայ դարմանի՝ դարձել է սանամօր յարդ կամ դարման, եւ այստեղից էլ առաջ է եկել սանահօրից դարման դողացող սանամօր զրոյցը :

Փողովրդական ստուգաբանութեան հետեւանքով Ասորեստանեայց նախնի Բաալ-Սամինը, որ երկնքի ու արեգակի մեծափառ Աստուածն էր, ազօտանալով դարձել է մի դեղջկուհի քուրիկ, որ գիւղի մարտներից ափալ-թափալ յարդ է դողանում քրքուած կողովով :

Եթէ մերժենք այն ստուգուրանութիւնը, որ Առիւծածեւ բացատրում է իրեւ առիւծ պատառող, առիւծ ձեւող, ապա ի՞նչ բացատրութիւն կարելի է տալ Մհերի յիշեալ մականուանը : Այս գէպքում անշուշտ մնում է ընդունել, որ Առիւծածեւ նշանակում է առիւծանման կամ ուղղակի Առիւծ Մհեր, ինչպէս որ հասկացել է բանաստեղծը՝ իւր «Սասունցի Դաւիթ»ը սկսելով հետեւեալ երկտողով :

«Առիւծ-Մհերը՝ զարմով դիւցազուն՝ Քառասուն տարի իշխում էր Սասուն<sup>1</sup>» :

Եւ որովհետեւ Մհեր-Միհերն արեգակն է, ուրեմն Առիւծ-Մհերը նոյն ինքն Առիւծ-Արեւն է : Հայ ժողովրդական մի հաւատալիքի համաձայն «արեւն արշաւում է հեծածմի առիւծ, որը մի մեծ սուր ձեռին՝ նրան պաշտպանում է չար ողիներից» : Արեգեանի կարծիքով «այս առիւծն իրանական ծագում ունի<sup>2</sup>» : Նոյնն ասում է նաեւ կանայեանցը՝ նշելով, որ «պարսից արքաների զինանշանը ցայսօր շիրի-խուռչուդ — առիւծ-արեւն է<sup>3</sup>» Պարսից զինանշանն անկասկած միհրապաշտ իրանի խորհրդանշն է, արտայայտութիւն հին ժողովրդական հաւատալիքի, որ արեւի ու առիւծի գաղափարը զուգորդում էր իրար : Հստ Ռայնաք՝ հին պարսիկների ըմբը ըլունմամբ՝

«Առիւծը սրբազան կրակի խորհրդանիշն է» :

Հէնց նոյն այս Առիւծ-Հրի կամ Առիւծ-Արեւի հաւատալիքի արձականգ կարող է լինել մեր ժողովրդական վէպի Առիւծածեւ ածականը կամ Մհերի Առիւծ մակդիրը :

Մհերը կոռուել է գաղանների, վիշապների ու գեւերի գէմ, բայց այսքանով չեսպառուում նրա հոյաբարքների շարանը : Արտաւղի նման նա էլ է Վահապնից տարրերուում նրանով, որ գեռ անելիք ունի :

Ինչպէս որ փոքրիկ կրակը — կայծը պահուած է քարի — կայծքարի մէջ եւ գուրս է գալիս կայծքարի — քարի միջից<sup>4</sup>, այնպէս էլ Մեծ Կրակը, Հուր-Մհերը փակուած է վիթիարի քարաժայիւ — Ակափու քարի մէջ եւ գուրս է գալու այնտեղից :

Մեզ թւում է, թէ ինչպէս Արտաւղի<sup>5</sup> այնպէս եւ Մհերի առասպեկի մէջ սկզբնապեկ<sup>6</sup> այն հաւատալիքն է եղել, թէ Մհերը դուրս է գալիս քարից ամէն տարի :

<sup>1</sup> Յովհ. Թումանեան, «Բանաստեղծութիւններ» թիֆլա, 1903, էջ 163:

<sup>2</sup> Աեղիան, 46:

<sup>3</sup> Կանայեանց, «Զոջանց տան պատմականը», 46—47:

<sup>4</sup> Կայծքարի ու հրահանի հաւատալիքի մասին տեսեր Abeghian, 90: Կրակի ծագման մասին մի շատ հետաքրքրական հայկական աւանդութիւն մէջ է բերաց Հայոսք, I, 264—265: Այս անդութեան մէջ էլ կրակի ստացում է կայծքարի ու հրահանի բարիստիք, Բոյլ այս միջոցը ու թէ Պրոմեթեոսն է, այլ զեւը:

«Կ'ասեն՝ ամեն իշմբարձման դիշեր Մհերի քարի տիւռ կը բացուի... Մէկ տարեկան խարս ի տեսի... Քարի տիւռ բացուի, Մհեր քարի միջէն ելլր ի...»<sup>1</sup>:

«Տարին մէկ անդամ յէրը (= այրի) տիւռ կը բացուը...»:

Մհերը տարին մէկ անդամ քարից դուրս էր գալիս անշուշտ վիշապների, դեւերի, զաղանների, գայլերի դէմ կոռւելու համար: Հեծեալ Մհերի այս կոռւի հետքն իբրեւ հեռաւոր արձագանդ դեռ նկատում ենք վէպի փոփոխակներից մէկի մէջ.

«Տարին մէկ անդամ, Գիլան ամիս (= զիլան ամիս=զայլի ամիս?) էն քեարից էնու ձիու չեռ կը տայ դիւս տ»:

Մեր կարծիքով այս է հնագոյն վարիանան առասպելի, որում պահուել է ամենամեայ գալստեան կամ ամենամեայ յարութեան զաղափարը, որ կար շատ ուրիշ աղուրի մէջ (Հմմտ. Թամմուզ, Աղոնիս, Ատմիս):

Առասպելի յետնագոյն աստիճանի ժամանակ ամենամեայ ելոյթին փոխարինում է լոյսի ու կրակի դիցազնի երկրորդ դարսութը դարերի վերջում:

«Մհերն ու ուր ձին կու զան աշխար: Նոր Մհեր կոտորում կէնի, վերջ կը մարտերուսուի»<sup>4</sup>:

Այս վարիանատում վերջաբանը վկայարանական բնոյթ է ստացել. Մհերը պիտի հասնի քրիստոնէի բարձրագոյն վառքին, պիտի նահատակուի կրօնի համար: Ակդրնապէս անշուշտ այս դիծը չէ եղել: Հնագոյն ըմբռնման համաձայն Մհերը պէտք է աշխարհ գայ «կոտորում» անելու, չարութեան դէմ, վիշապների ու դեւերի դէմ կովելու համար: Անշուշտ այս նոյնն է, ինչ որ հականում էին հին պարսիկները, երբ առում էին, թէ «դարերի վերջում Միթրան զալու է հեռաւոր արեւելքից եւ համաշխարհն աշխարէլու է փտութիւնից եւ մահուանից. նավերջնականապէս յաղթելու է Անդրա-Մայ-

<sup>1</sup> Մ. Աբեղեան, «Դասիթ եւ Մհերը», Շում, 1889,

<sup>2</sup> Գարեգին սրկ. «Ասմայ Ճռերը», 150: Այս գրքում ապագ մի ուրիշ փոփոխակի մէջ առասպելն աղուում է հայուսաւորչական եկեղեցական տոմարից. «Տարին ընդ առաքատիկ (նաև ակատիկ) Մհեր են քարից դուս կ ելաց» (նոյն, 60):

<sup>3</sup> Գարեգին սրկ. 150:  
<sup>4</sup> Գարեգին սրկ. 60:

նիւին, չարութեան ոգուն եւ հոյակապ մեծափառութեամբ տիրելու է նորոգուած համաշխարհին»: Մհերի ու Միթրայի զորյցի ու հաւատալիքի նոյնութիւնը երեւում է մանրամասնութիւններից էլ: Ինչպէս յայտնի է, Մհերի դրու է կոչում այն քարաժայեւրից մէկը, որոնց հետ կապուած է Մհերի անունը: Կանայեանցն արդէն մատնանշել է, որ Der-i-Mihr, այսինքն Միհրի դրու են կոչուել պարսից մէջ Միթրային նուիրուած մեծ զոհարանները («Սասմայ ծռեր վէպի երեք փոփոխակ», Յառաջարան, էջ 1, ծանօթ. 2): Ժամանակին Լազարդն էլ «մեհեւան» բառն ստուգարանելիս այս համեմատել է պարսից ձար-i-միհրի (=մեհեւան կամ Միհրեան տաճարի) հետ (Տաշեան, «Ռւսումն հայ. զաս. լեզուի», 562):

Հետաքրքրական է, որ ըստ ժողովրդական վէպի մի փոփոխակի՝ Ակովու քարի մէջ, որտեղ փակուած է Մհերը, նրազ է վառվում:

«Կարմիր կիրակին յիրիկուան պատարագ որ կընը, էն յիրիկուան մէկ մարդ ուր աղջկան կասը. — Իլի, կինս ժամ, մում կըսը, օլսնուկ կրակ առ, բի: Ախշիկ կընը տիւս, կիրիչը, կը տեսնայ եղա ֆրարէն նրափի բուլս կրթիք. էդ ախչիկ էլաւ, կինաց էն ումուտով, թի ժամն ի: Մտաւ էնտեղ, զիրագ կպոց, զարձաւ, ուը կէր, տիւս էկաւ իրար: Ախշիկ մնաց էնտեղ, տեսաւ, որ էրկնուց մանանայ իկի. Մհերն էլ առից, կերաւ, ձին էլ, ախչիկն էլ: Էլ չքեաղցացան, մինչեւ տարին թլմթմաւ: Էն աւուր ինչ տարին թլմթմաւ, ախչիկ զիրագ կպոց, ինչ տիւս բացուաւ, էլաւ տիւս, նրազ առից, էկաւ տուն» (Գարեգին սրկ. 150):

Վանայ զիցանուէր քարաժայուի մէջ կենդանի ու անմեռ փակուած է ոչ միայն չուր-Մհերն, այլ եւ մինչ այժմ էլ այստեղ վառւում է նրա նիւթական իորհրդանիչը — վասնուկ կրակը» կամ նուիրական, անշէջ ճրազը (Հմմտ. Լուսաւորչի անշէջ կանթեղի աւանդութիւնը):

Բայ նոյն վարիանտի՝ «օխնուկ կրակի» դնացող աղջիկը պատմում է, թէ Մհերի դուան վրայ «մէկ կեօքլը (= ընկուզենու) դուռ կէր» (Գարեգին սրկ. 150): Այս «կեօքը դուռի» նշանակութիւնն ու Միթր-Մհերի չետ ունեցած կապը հասկանալու համար

պէտք է յիշել, որ հին ազգերի մէջ «կրակը բոյսերի հետ կապուած է մտածում» եւ «կայծակի մարմնացումն են համարուած շատ բոյսեր, որոնք հնումը գործ են ածուել շփումով սրբազն կրակ հանելու համար» (Արեգեան, «Հայ ժողովրդական առասպելները», 140) :

Կրակ տուող սրբազն ծառի յիշատակութեան թանգագին հետք է այս «ընկուղենին» Հուր-Մհերի առասպելի մէջ :

Սակայն Մհերի՝ Միհր լինելու ամենազօրեղ ապացոյցներից մէկն այն քարաժայուի անունն է, որ սովորաբար կոչում է Ակովուքար եւ որի խսկական անունն է Ագուառքար (Գարեգին սրկ. 150): Ժողովրդական ստուգաբանութեան համաձայն քարն այսպէս է կոչում, որովհետեւ Մհերի նետից վիրաւոր ազուան է նրան առաջնորդել այնտեղ «ինչ ազուաւ մտաւ էնտեղ, էն դիմաց կասին Ագուառու քեար» (Գարեգին սրկ. 150): Համեմատական դիցաբանութիւնը սրան բոլորովին այլ բացարարութիւն է տալիս: «Այս զրոյցների մեծամասնութեան մէջ, — ասում է Ա. Ի. Տիւմենեւը՝ խօսելով կրակի ծագման առասպեկտերի մասին, — կրակի յափշտակումն ու նրան տիրանալը վերագրում է կենդանիների կամ թուչունների թագաւորութեան այս կամ այն ներկայացուցին: Նախնադարեան այսպիսի պրոմեթէոսների գերում յատկապէս յաճախ հանդէս են զալիս թռչունները-վառ-կարմիր եւ կամ ածխի նման սեւ թռչունները, որոնց սեւ ու մրկուած փետուրները վկայում են նրանց կատարած հոյարարքի մասին: Այսպիսիներից է ամենից առաջ ազուաւը . . .» (Ա. Ի. Տիւմենեւ, «Նախնադարեան կրօնը», «Записки научного общества мистов», Հանդէսում 1922, № 4, Մոսկվա-Պետրոգրադ, էջ 103): Այսպիսով ուրեմն ազուաւը կրակապաշտների սրբազն թռչուն է. սա կրակի աստու խորհրդանիշն է նաև միհրապաշտ չայտատանում: Հուր Մհեր-Միհրը փակուած է իրածին քարի մէջ, որի մօտ տընկուած է իրատու սրբազն ծառը եւ որտեղ թառում է իրարեր ազուաւը: Ազուաւի ու հրապաշտութեան կապը տեսնում ենք նաև Անձեւացեաց աշխարհում, որտեղ գտնում ենք Ագուառի քարը, Դարբնաց քարը, որտեղից լսելի էին լինում «կունաձայն» դարբ-

նաց» եւ որտեղից «Ա. առաքեալն հալածեաց զդարինսի - զգործօնեայս չարին . . .» (Ալիշան, «Հին հաւատոք», 37—38, Կանայեանց, «Զոջանց տան պատմականը», 49): Ազուաւն իրեւ կրակի բարի աստծու թռչուն՝ թչնամի պիտի լինէր նրա թշնամիներին-դեւերին, վիշապներին, ուրեմն եւ օձերին: Այս թշնամութեան հետքը տեսնում ենք Զանդեզուրի Ծիծեռնավանքի մի խաչքարի — Ագուաւխաչի աւանդութեան մէջ, որտեղ ազուաւը մարդկանց փրկում է օձից (Խ. Սամուէլեան, «Տօմեմիզմը հայոց մէջ», տեսէք «Բանրեր Հ. Գ. Խնասիտութի», Ա. Բ., 32): Հայ սնոտիապաշտական մի գրուածքում «Երկնահայեաց» ու «Արեգակնահայեաց» օձերի կողքին գրուած է նաև «Օձն Ագուաւանես» (Ալիշան, «Հին հաւատոք», 154): Ժողովրդական հաւատալիքների համաձայն էլ ազուաւը որ սեւ է, պաշտամունքի առարկայ է («Բանրեր ՀԳԻ.» Ա. Բ., 16): Սեւ գոյնի պաշտելի գոյն լինելու հետեւանքով է անշուշտ, որ «Հմայքների, կախարդութիւնների, ինչպէս եւ սրբերին զոհարերելու համար միշտ առաւելութիւն է տրւում, նոյն խոկ երբեմն անպայման պահանջնում է, որ աքլորը կամ հաւը ան գոյնի լինին»: («Բանրեր ՀԳԻ.» Ա. Բ., 27): Թերեւս այս մտայնութեամբ էլ պէտք է բացարել, որ ինչպէս այլ ժողովուրդների, այնպէս եւ հայոց մէջ սեւ գոյն ուրախութեան գոյն էր, խոկ սեւի հակառակին — սպիտակը՝ սպի:

Ազուաւի ու հրապաշտութեան նոյն կապը տեսնում ենք Վրաստանում էլ: Մի՛ Մհերը փակուած է Ազուաւու քարի մէջ, վրաց Ամիրանը՝ Սա-Կորնէ լերան մօտ («Qorani նշանակում է ազուաւ, այսուղից էլ Սա-Կորնէ՝ ազուաւների լեռ.»), Խահանօ, I, 40, Կանայեանց, «Զոջանց տան պատմականը», 48—49): Վարիանաներից մէկի համաձայն՝ շղթայակապ Ամիրանին ուտելիք է բերում ազուաւը (Խահանօ, I, 26): Վրաստանում — հին Մցիւեթին մօտիկ կայ մի աւերակ, որ կոչում է «Կվավիս - Սահպարի», այսինքն «Ագուառի աշտարակ»: Արա մասին եղած աւանդութեան մէջ նորից միասին գտնում ենք ազուաւներին ու օձերին: Կվավիս-Մակղարի է կոչում. նաև Գորու գաւառի մի աւերակ, որի մասին եղած աւանդութեան նոյնն է, ինչ որ Զանդեզուրի

Ագուալխաչի աւանդութիւնը : Ինչպէս այս ,  
այնպէս եւ Վրաց աւանդութեան մէջ ազուրը  
մարդկանց փրկում է օձից եւ համարում  
«Երկնային կամքի պատգամաբեր» (Խաչ-  
հօն, I, 279—281) :

կամահակ է լինելու Մհերի եր-  
կըսրդ գալուստը :

Սրան վէպը պատասխանում է.

— Եր օր ցորնի հատն էլաւ մէկ ման-  
սուր, գետին կը խայլիմնա, Մշերն ու ուր  
ձին կու զան աշխար <sup>1</sup>»:

Ժամանակը սահմանւում է զիւղացու  
մտածողութեամբ ու ասացուածով։ Դարա-  
շը անները որոշում են բերքի յատկու-  
թեամբ։ Շինականի պատմափիլիսոփիայու-  
թեան համաձայն մարդկութեան անկման  
շը աններում է, որ ցորենի հատը վտիս ու  
փուծ է լինում։ Որքան ժամանակները բարի  
են, այնքան հատիկները լիքն են, յուռիթի։  
Գիւղացու վախաղն է տեսնել ցորենի հա-  
տիկն այնքան խոչըր, որքան որ է մասուրը։  
Այս նրա երազն է, նրա երազած երջանիկ  
դարը։ Ուու ժողովրդական բանահիւսու-  
թեան համաձայն երջանիկ դարում կորեկի  
հատիկը լինում է . . . ձուաչափ։ Այս հայ-  
եացքը պարունակող մի զրոյց սիրուն վերա-  
պատճել է ոուս հանճարեղ վիպասան և եւ  
Տուխառյը «Զուաչափ հատիկը» վերնագրով  
պատճառածքի մէջ։ Մանուկները փողոցում  
խաղալիս գտնում են ձուաչափ կորեկի հա-  
տիկ. «Հ ոք չդիւտ, թէ ինչ բան է այն. տա-  
նում են թագաւորի մօտ. վերջապէս զըս-  
նում է մի հնամեայ ծերունի, որ բացա-  
տրում է, թէ կորեկի հատիկ է։ Թագաւորի  
ու ծերունու միջեւ այս խօսակցութիւնն է  
վնում։

— Ասա ինձ, պապի, ո՞ր բաել եւ ի՞ւշ  
յամանակ էր բուսնում այսպիսի հատուիկ:

— Իմ ժամանակ էղ տեսակ սերմ առ  
տեղ էլ բուսնում էր, էղ հացով իմ ես իմ  
ամբողջ կեանքս կերակըուել եւ ուրիշնե-  
րին կերակըուել . . .

— Միտեղ զուր զննել ես այսպիսուն  
կամ ինքը ոչ համար աննել ես :

— իմ ժամանակ ոչ ոք մտածել անդամ  
ըստ կազմակերպության, որ հացը

զարող էր տեսակ մեղք բայ, ծախէ կամ առնե իսկ փողն ինչ է, չէին եւ

$\alpha_{\text{min}} \approx 0.05$ ,  $t = t_{\text{min}}$

իմանում : Ամենքն էլ իրանց հացն ունէին առառ-առառ :

— Ո՞րտեղ էիր ցանում դու այս տեսակ  
սերմ և ո՞րտեղ էր քո հանդի:

— իմ հանդու Աստծու աշխարհն էր, ուր  
որ վար էի անում, էն էլ իմ հանդու էր. հողն  
աղասին էր. ոչ ոք չէր ասում՝ «իմ հողս»,  
«իմս» ասում էին միայն աշխատանքի հա-  
մար :

— Ինչու առաջ այդ տեսակ սերմ բուս-նում էր եւ հիմա չէ բուսնում :

— Նրանից է, որ մարդիկ թողին իրանց  
աշխատանքով ապրելն ու սկսեցին աչք տնկել  
ուրիշի աշխատանքի վրայ։ Հին ժամանակ  
էղպէս չէին ապրում. հին ժամանակ ապրում  
չէին էնպէս, ինչպէս Աստուած է պատուի-  
րել — իրանցը վայելում էին եւ ուրիշի ու-  
նեցածի վրայ աչք չէին դցում»։ (Լ. Ն. Տոլ-  
ստոյ, «Ճռովովրդական պատմուածքներ»,  
Բ. պլակ, թարգմ. Ա. Մ., Թիֆլիս, 1908,  
էջ 5—9)։

Այս պատմուածքի ու Մէերի առասպելի  
տարբերութիւնն այս կէտում այն է, որ  
ինչւեռ ուսւ ժողովրդական զրոյցը երջա-  
նիկ դարը — ձուաչափ հատկի դարը երեւա-  
կայում է անցեալում, հայ ժողովրդական  
իշպը նոյն երջանիկ դարը — մասրաչափ  
հատկի դարը պատկերացնում է ապա-  
բայում՝ Մէերի երկրորդ զալստից յետոյ:

Առասպեկտ առեւ չ, ու ի դ յ ը  
զպաւ մասուրի չափ, այն ժամանակ կու  
լայ Մհերը: Այստեղ գարի յատկանիշը  
բուած է իրբեւ նախապայման: Դժուար չէ  
ուահել, որ սկզբնական վարիանտի համա-  
տին Մհերի գալով է հենց սկսուելու երջա-  
կի դարձաշրջանը, երբ ցորենի հատք կարող  
անել եւ մինելու է մէկ մասուր:

Մհերի սուսպիկն ու հաւատավիքը սրա-  
ով էլ աւելի բովանդակալից են գտնում  
և ապահովելով ոչ միայն Վահագնի, այլ եւ

Մհերի երկրորդ գալստի հետ կապուած  
ոչ միայն չարի պարտութեան ու բարու-  
թեանակի հաւատն, այլ եւ այն ակնկա-  
լիթիւնը, թէ աշխարհը միշտ չի լինելու մի  
ողազուրկ ու ճռկիթ հողամաս, այլ գառ-

<sup>1</sup> Հասկանալի է, որ այս ասածներս ճիշտ են, ի հարկէ,  
ոյն լավագւ որ լափով այս մասին վկայութիւն մեզ հա-  
սած առ զեկութիւնները:

նալու է մի բարելի երանավայր դալիք բախ-  
տաւոր դարաշրջանում :

Դժբախտաբար տուեաներ չունենք, որ  
կարողանանք հանրային-ընկերական յարա-  
բերութիւնների տեսակէտից էլ բնորոշել  
զալիք բախտաւոր դարաշրջանը :

Ինչ վերաբերում է պարսիկներին, ապա  
այս մասին կարելի է որոշ հետեւութիւններ  
հանել՝ բացամամբ եղբակացութիւն անե-  
լու միջոցով : Պարսից առասպելաբանութեան  
մէջ չարութեան գլխաւոր մարմնացումնե-  
րից մէկն էր Բիւրասպի Աժդահակը, որին  
Հրովարնը շղթայում է Դըմբաւենդ լերան  
վրայ : Խորենացին երբ պատմում է Աժդա-  
հակի չար արարքները, սրանց շարքում  
թւում է նաեւ հետեւեալը .

«Հասարակաց զկենցաղս կամէր ցուցա-  
նել ամենեցուն եւ ասէր՝ «ոչ ինչ իւր առան-  
ձին ումեք ունել պարտ է», այլ հասարա-  
կաց<sup>1</sup>» :

Բիւրասպի Աժդահակն առասպելի մէջ  
արտագրութեան ու բաշխման «Հասարակաց»  
կաղմակերպութիւնը կամ համայնավարու-  
թիւնը յայտարարւում է չարագեւի ուսու-  
մունք : Սրանից պէտք է եղբակացնել, որ  
եթէ Միթրայի առասպելն ունէր հանրային-  
ընկերական որոշ իդէալ, ապա այս պիտի լի-  
նէր արտադրութեան ու բաշխման ոչ թէ  
«Հասարակաց» կաղմակերպութիւնն, այլ  
«առանձին կենցաղն», այսինքն մասնաւոր-  
սեփականատիրական յարաբերութիւնները :

Պարսից առասպելը՝ տողորուած որոշ  
հանրային խաւի հոգեբանութեամբ՝ ատե-  
լութեամբ ու արհամարհանքով է նայում  
նախնադարեան «Հասարակաց կենցաղին» :

Ինչպէս էին պատկերացնում հին հայ-  
երն ու մասնաւորապէս հայ վիճականներն  
այն երջանիկ դարաշրջանը, երբ լոյսի ու  
բարութեան աստծու երկրորդ գալստի հե-  
տեւանքով ցորենի հատը լինելու է մասուրի  
չափ :

Այս մասին դժբախտաբար լուսմ է թէ  
Սրտաւազդի առասպելն ու թէ Մհերի զրոյցը ;  
Սակայն եթէ որոշ չէ երջանիկ դարաշրջանի  
տնտեսակարգը, յամենայն դէպս մի բան  
պարզ է, բարի աստծու կամ զիւցազնի եր-  
կրորդ գալստի հետեւանքով հաստատուելու  
է ոչ միայն ցանկալի բարյակարգ, այլ եւ

բարօր տնտեսավիճակ : Ոչ միայն արդար  
իրաւունքն է թագաւորելու, այլ եւ մարդ-  
կութիւնն աղաւհովաւած է լինելու հացով :

Միհրապաշտութիւնը տարածուած է եղել  
չառ հնուց նաեւ մեր հարեւան Վրաստանում  
էլ, որտեղ նրա արտայայտութիւնն է Ամի-  
րանի — Վրաց Մեսիա-Միհրի — առասպելը :  
«Ամիրանը բարու Աստուածն է», — ասում  
է Վրաց գրականութեան պատմագիրը (Ха-  
хանօվ, 42) : Եւ իրօք, Ամիրանի զրոյցը  
դիւմարտի կամ վիշապաքաղի առասպել է  
լոկ : Դեւերը յարձակւում են Ամիրանի ու  
եղբայրների վրայ, երբ սրանք որբ մանուկ-  
ներ էին, եւ աւերում սրանց ամբողջ ստա-  
ցուածքը (Хахանօվ, 20) : Ամիրանը մեծա-  
նում եւ կուռմ է դեւերի ու վիշապների  
գէմ (Хахանօվ, 22) : Ամիրանը շղթայում է  
դեւին (Хахանօվ, 28 ծ.) : Նա փակւում է լե-  
րան մէջ, եւ նրան կլանելու է գալիս վիշապը (Хахանօվ, 27) : Վերջին դատաստանի օրը  
զալու է Ամիրանը : Այն քարաժայուց, որի  
մէջ փակւում ու կենդանի մնում է նա,  
լուսում է մի ձայն, որ ասում է .

«Մի ցնծաք, դեւեր,  
Մէկ էլ էք տեսնելու Ամիրանին՝  
Զրահը հաղին ու սուրը ձեռին,  
Որ հալածելու եւ կործանելու է ձեզ  
իւր հզօր բազկով» (Хахանօվ, 27) :

Ամիրանի զրոյցի մէջ էլ կայ ընկերաբ-  
նական ձգտումների որոշ չեց : Թէեւ այս-  
տեղ չկայ «մասուրի չափ ցորենի հատի»  
ակնկալութիւնը, բայց կայ աւելի արմատա-  
կան տրամադրութիւն . աղքատների ու  
ճնշուածների բարեկամն է Ամիրանը, որը

«Յանկանում է ցանել աշխարհում հաւա-  
սարութիւն-արդարութիւն,  
Ժողովրդին տալ հացը կաթնով եւ ոչ թէ  
արիւնու» :

Ամիրանի առասպելի այս բնութագիրը  
հաստատող փաստեր տալիս է «Վրաց գլո-  
կանութեան պատմութիւնը» (Хахանօվ, 39—  
40, 42—43, այլ եւ «Բանրեր Հայ. Գլու-  
ինստիտուտի», Ա—Բ, 103) :

Ամիրանի զրոյցը նոյնն է, ինչ որ են Ալ-  
տաւազդի ու Մհերի առասպելները : Մեր  
Մհերն ու Վրաց Ամիրանը նոյնանում են  
նաեւ իրենց անունների ստուգաբարանութեամբ,  
Առաջին անգամ Ստ. Կանայեանցն է 1907  
թուականին այն միտքը յայտնել, թէ «Ամի-

<sup>1</sup> Խորենացի, Ա, յաւելուած Բ, 91:

րանն էլ Միհրն է, ինչպէս եւ մեր Մհերը («Զողանց տան պատմականը», 49): Նրա կարծիքով «Ամիրան անունը կազմուած է Միհրան ու Ամիրա բառերից» (նոյն, 49): 1913 թուականին փոքրիկ տարրերութեամբ էպէս նոյն ստուգաբանութիւնն է առեւել ի. Զաւախաշովիլին, ըստ որի «Ամիրան... համապատասխանում է Միհրան-Ամիթրան-Միթրին. ան... այն հին մասնիկն է, որն այսօր էլ ընդունուած է արխազերէնում («Բանրեր Հայ. Գիտ. ինստիտուտի», Ա.Բ., 99): Բոլորովին այլ ու նոր ստուգաբանութիւն է առեւել յարեթաբանութեան հիմնադիր ակադեմիկ Ն. Մառն, ըստ որի Ամիրան անունն արխազերէն ա-ուրա կամ ա-ուր բառն է, որ նշանակում է արեգակ («Բանրեր Հգի.», Ա.Բ., 100—101):

Դժբախտաբար ձեռքի տակ չունենք Մատի ստուգաբանութիւնը պարունակող բուն աղբիւրներն, ուստի եւ պիտի բաւականանք միհրաբանական դպրոցի ստուգաբանութիւնների մասին խօսելով: Վրաց ուսցազնի անունն ստուգաբաննելիս «Ամիրայ» բառը մէջ տեղ բերելն անհրաժեշտ չէ, քանի որ Միհրան անուան հայկական Միհրան (Օրբելիան, ԿԶ, 418), յունական Miranes (Justi, 214) ու Վրացական Միհրիան (Justi, 216, «Բանրեր Հգի.», Ա.Բ., 98) ձեւերը եւ անախաչնչիւնը լիովին բաւական են: Յատուկ անուան սկզբին կցուած այս անչիւնը կայ, ինչպէս ասել ենք ոչ միայն վրացերէնում ու արխազերէնում, այլ եւ պարսկերէնում ու հայերէնում: Պարսկերէնում, օրինակ, Պլատոնը դարձել է Ա-Փլաթուն, իսկ Ֆրիդունն եղել է Ա-Փրիդուն (Justi, 331): Հայերէնում, բացի Ա-միր-հերսեհ ու Ա-միրատ անուաններից, իրեւ օրինակ կարելի է նշել Համբաւալ-Ռաստամ (Փաւառոս, Դ, Պ, 77), Ռոստամ ու Ռոստոմ (Խորենացի, Բ, Ը, 114, 115 ու Գ, ԽՊ, 312) ձեւերի կողքին, որոնք համապատասխանում են իրանական Rostam-Rostam-Rustam-Rostom-ին (Justi, 262—266, 259) մէր մատենազիրները պահել են Ա-ռոստամ (Փաւառոս, Զ, Պ, 244) ու Ա-ռոստոմ (Փարպեցի, Գ, Կ, 122, Գ, Կ, 124, 125) ձեւերը (Հմմտ. Justi, 20, 27): (Հայունակալի.) Թաղեաս սիդԱթէդելն ենշառ:

## ՊԱՏՄԱԿԱՆ

### ՀՅՈՒՍՑԵՆԻ ՈՍՏԻԿԵՆՆԵՐՈՒ ԺԸՄԸ- ՆԱԿՈԳԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԾԻԾԶԻՆ ԾԲԲԸՍԵԵՆՑ ՕՐՈՎ

(Ծարուճակութիւն:)

Խուզէյմի յաջորդն Եակուրի կ'անուանէ Բւտով բ. Խաչիդ աս-Սուլէմի<sup>131</sup>, Բելազորի եւ Տարարի ասոր մասին յիշատակութիւն չեն լներ: Աստ կը յաջորդէ Եազիդ բ. Մաղեադ բ. Զայիդ աշ-Շէյբանի<sup>132</sup>: Դրամներու վրայ Եազիդի անունը մինչեւ Հիմայ 169 եւ 170 տարիներուն մէջ հանդիպած է<sup>133</sup>: Հաւանական է թէ նա արգէն իւր նախորդներու կառավարութեան ժամանակ Հայաստանի մէջ որոշ դեր մը խաղած է<sup>134</sup>: Ըստ Տարարիի<sup>135</sup> Եազիդ 172ին վար առնուեցաւ<sup>136</sup> եւ անոր տեղ զրուեցաւ Խալիֆային Եղբայրն Ուրէյլալրահ բ. Մահղի<sup>137</sup>: Բելազորիի քովն ալ<sup>138</sup> իրը Եազիդի յաջորդ կը յիշուի Ուրէյլալրահ բ. Մահղի: Խսկ Եազիդի ամենեւին յիշատակութիւն չ'լներ: Հայ պատմագիրները կ'աւանդեն թէ Խաչիդի այս եղայլը Հայաստանի կառավարիչ էր 788էն մինչեւ 798<sup>139</sup> = 172—182. Ղեւոնդ<sup>140</sup> այս Ովրէյլահի մասին կ'ըսէ թէ «Խաչիդի Հակառակողդ» եղած ըլլայ: Այս Հակառակողդութիւնն ստիպեց զիտաքի Ովրէյլահի յանձնել Ասրպատական, Հայաստան, Վրաստանում:

<sup>131</sup> Համազարեան, Թիւ 31:

<sup>132</sup> Ղազարեան, Թիւ 32, Եակուրի II, 516 Բելա-

զորի 210:

<sup>133</sup> Հարունի 169 տարւոյն — Տիզենգազեն Nr. 1090,

170 տարւոյն — Brit. Mus. I, Nr. 140:

<sup>134</sup> Ըստ Հայ պատմազիրներու (Petermann 6—7) Աս-Մարեկն 786ին (= 169—170էն) անուանուած էր:

<sup>135</sup> III, 607:

<sup>136</sup> Կամանապէս Ibn Challikan Nr. 830 (Հրատ. Wüsten-

feld):<sup>141</sup>

<sup>137</sup> Ղազարեան, Թիւ 33:

<sup>138</sup> Բելազորի 210:

<sup>139</sup> Պատկանեանի գիտողութիւնը կ'եւոնդի թարգ-

մանութեան մէջ 164, Թիւ 233: Ըստ St. Martinի, I,

342—343 Ուրէյլալրահ կառավարած է 788էն մինչեւ 803

417 էլլ վրայ մատանիլ կ'ընէ մի եւ նոյն տարիներն ինչ

որ ունի Պատկանեան: Եազիդ բ. Մաղեադ հոս կ'անուա-

րուի Ուրէյլալրահի նախորդ, որ կառավարած է 788էն

մինչեւ 788:

<sup>140</sup> ԳԼ. ԽԱ, էջ 166: